

ԼՈՒՆՅՈՒՆԻ ԿՐՕՆԵՐՈՐՈՒԹՅՈՒՆ

(Հարսնակու թիւն տես թիւ Ա կրնո 7.)

Մեր ազգին կրօնաւորական ուխտաւոր եկեղեցականներ պատրաստելու աստուածակարգ սահմանադրութիւնը Ս. Գրիգոր Դ ռաւապորտ Զօրմէն սկսած կամ վերանորոգուած է: Տարօնի մէջ Գլխակայ վանքը շինելով, Կնտօն և Արօնիդէս հրաշալի մենացեալները օրինակ կամ հեղինակ կարգեց հայկական եկեղեցւոյն մենաւոր կենաց. ուր վերջն ինքն ալ քանի մ'ամիս առանձնացաւ, աշխարհի մէջ կատարած մեծ աւաքելութենէն հրաժարելով:

Գժուար բան է ամէն բարեկարգ սահմանադրութիւն իւր նախնական կատարելութեան մէջ հաստատուն բռնել: Եւ առ չանցաւ, մեծին Վերսիսի օրերը, կրօնաւորներն սկսան իրենց վիճակին պայմաններուն վրայ հաստատուն չկենալ. բախտի կամ փառաց հետամտութեան հողի դանդաղ գլխէ կհանէր, և վայրայած թափառականութիւններով քաղաքէ քաղաք կը շրջէին. շատերն ալ աշխարհական մարդիկներու տներ կնատէին: Պատմութիւնը կըսէ՝ թէ մեծն Վերսէս կրօնաւորաց այս անկարգ, երկակենցաղ և խառնակ վիճակին դարման մ'ընելու համար՝ զանազան կարգի մենաստաններ շինեց. Աղբայրանոցներ՝ ուր կրօնաւոր եղբայրներ կհաւաքէին. Մենանոցներ՝ ուր շատ մ'եղբայրներ միասին կընակէին, բայց առանձին առանձին ձգնութեանց կապարտէին. առանցնակեցաց Խորձիթներ՝ ուր կրօնաւորներ առանց մէկ տեղ մ'ըլլալու, որոյն ձգնաւորական կեանք կանցունէին:

Մեծին Վերսիսի այս կարգադրութիւնները տարել սկսեցին կրօնաւորը, և իրենց վիճակին և կարգին չզրաշարժող աշխարհական բաներու ալ ձեռք զարկին, որմէն ոչ նուազ չարիք կհետեւէր կրօնաւորութեան պատուոյն: Աւարտ սուրբ Սահակ պարթև հայրապետի օրով աղղային ժողով մը վճռեց, որ կրօնաւորը բնաւ աշխարհական իրաց չխառնուին, այլ ամեն բանէ հրաժարեալ կեանք մը ունենան:

Մարդկանաց իշխանութեան ատեն, սուրբ Յովսէփ կաթուղիկոսի հայրապետութեան եօթներորդ տարին դուռնաբաց աղղային ժողով մը քսան զլուխ կանոն սահմանեց, որոնց Աւրդ կանոնն էր, թէ ով որ աշխարհէ հրաժարել և կրօնաւոր ըլլալ կուղէ, վանք պէտք է կենաց վանական կանոնաց իշխանութեան տակ:

Գարձեալ մարդկանաց իշխանութեան ատեն Վերսէս աշտարակեցին ժողով մը դուռնաբաց ի Գուին, նոյն ժողովոյն Աւրդ կանոնն է, վանականը աշխարհականաց տուն չթեւանին, այլ մատակայ վանքը, և եթէ մօտ վանք չկայ, աւաղերիցու տունը*:

Սուրբ Վերսէս Էնորհայի հայրապետն ալ, վերոյիշեալ ժողովոյց, կամ որ նոյն է, հայկական Ակեղեցւոյ ընդհանուր սկիզբանց համեմատ խօսելով՝ առ կրօնաւորս, աշխարհէ հրաժարող և աշխարհական անխորժակով կամ կենցաղաւարութեամբ ապրող կրօնաւորները Գովտի կնոջ կը-

(*) Աղղային կանոնաց զլուխ երէն կիսեմաբ որ աւաղերիցու տուն ըսուածը, ոչ թէ աւագ քահանային բուն տունն է, որ նոյն քահանային բնաւիկը կըրնակին, այլ եկեղեցւոյ մօտ սենեակը, որ շաբաթական կարգ վարող քահանայն, որ աւաղերէց կը ոտի, կընակի:

նմանցունէ, որ Առդովի և Անգովրայ միջ տեղը արձան աղի կտրեցաւ, այսինքն քար մը, որ ոչ բոլորովին աղի համ ունի, որ կերակրոյ համար գործածուի, և ոչ ալ պէտք եղած կարծրութիւնն ունի, որ շէնքի գործածելու յարմարութիւն ունենայ:

Ակեղեցւոյ կամ կրօնքին սկզբունքը ինպէս կապահանջէ՝ որ կրօնաւորական ուխտիւք եկեղեցականութեան կոչեցեալները մշտնջենապէս Աղբայրանոցներու մէջ բնակին, և միայն հարկը պահանջած ատեն, ի շինութիւն Ակեղեցւոյ քաղաքներու մէջ պտըտին: Բսածնիս աւելի հաւատարիմ ընելու համար Ա. Առաւորիչ հօր՝ և հաւատոյ Առաջնորդին խօսքերը մէջ բերենք անոր Յաճախապատում ծառերէն օրինակելով:

"Անբժշկելի հիւանդութեան մէջ կիցնայ և ուխտը կմոռնայ, կըսէ, այն կրօնաւորը, որ կրօնական եղբայրութենէ կրածնուի, վաճէ, դուրս կիջէ: Իսկ եթէ ի հրամանէ Ակեղեցւոյ գլխաւորներուն և վանական եղբայրութեան, ի պէտք Ակեղեցւոյ եպիսկոպոսութիւն, առաջնորդութիւն և քահանայութիւն յանձնառնուլ բռնադատուի, պէտք չէ որ անձին յօժար կամօք միկեն ընդունի. այլ իբրեւ ի հրամանէ Ակեղեցւոյն գլխաւորին կամ առաջնորդին կամ եղբարց բռնադատեալ, արտասուօք և ապաշաւանօք այլոց փրկութեան համար ընդունի: Աթէ, այսպէս շարժի Աստուծոյ անունը հայհոյել չտար:

"Ասեւ ուղղափառ եպիսկոպոսաց ժողովները, որ ուղղափառ հաւատքը հաստատեցին և Ակեղեցւոյ կանոններ սահմանեցին, այս ալ նշանակէ՝ սահմանեցին, որ եղբայրէն ասանց ասանդարեմ և եղբարց հա-

տարեմութեան լուսնի զոհարար չլինէ համ ազաճ րէշը չպարտէ. ով որ այս կանոնին դէմ կ'յանդգնի վարուիլ, հայրապետաց նզովքին տակ կըլայ: Այլ ինչ բանի որ կանչուեցաւ մեկը, պէտք է որ այն կոչման վրայ հաստատուն մնայ:"

Ա. Առաւորիչ հօր կարգադրութիւնը և պահանջմունքը բաղդատէ հիմայ, ընթերցող, մեր աղգին արդի կրօնաւորաց ընթացքին հետ:

Եպիսկոպոս՝ եպիսկոպոսի ժողովուրդ կամ վիճակ յափշտակելու ետեւէ է: Եպիսկոպոսի մը առաջնորդութիւնը այնչափ միայն կտեւէ, որչափ որ իւր շահը և անձնասիրութիւնը կապահանջէ. ասոնք տակնուվերայ չընելու համար ժողովրդեան մինչև փցուն ախորժակին խունկ կծխէ, Աղբայրաբու սուտ մարդարէներուն պէս, իսկ եթէ չյաջողեցաւ այսպէսով շահը պատրասարել, ոտքին փոշին կ'թոթուէ, Պօլիս կ'վազէ, ամեն ցած միջոց և գաղտագողի ծամբայ ձեռք կառնէ, որ ուրիշ շահաւոր վիճակ մը ձեռք ձգէ, հակառակ վճռոց այն մեծ տիեզերական Ա. ժողովոց Ա. Պօլսոյ և Արիկոյ, որ սահմանեց. "Մի որ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ իշխեացէ՝ քաղաքէ ի քաղաք փոխէ, և եթէ յանդգնեցէ որ զոյս առնել՝ կշտամբանօք արգելցի յանդգնութիւն գործոյն, և եւթան յիշէ Ակեղեցւոյ՝ դարձուցի ի նոյն: "Առաւորանը կըսէ. ծառ չար պտուղ բարի ոչ առնէ, Եպիսկոպոսութիւնը աւետարանի հոգւով չարշտողն ալ աւետարանին հոգւոյն ծառայող եկեղեցականներ չը ձեռնադրէր, այլ այնպիսիները՝ որոնք իրենց նիւթական ծառայութեանը կամ ըստ պատաւորութեան միջոցով աչք մտած են,

ասոնք ալ Եզրովրոսին խեղեփարը կգառնան. այնպէս կծառայեն աւետարանին՝ ինչպէս իրենց հայրերը. ԵՃՈՒՈՒՄՈՒՈՒ կը քայեն իրենց հօրը շիտակ քայելը բնույտնաներուն համար. եկեղեցւոյ պէտքը բնաւ հոգերնին չըլլար, այլ ծիծռան և խորոյ պէս օր մարմանդ որ իրենց կազմուածքին յարմարի՝ հոն կվազեն: Անկարգութիւն մը ուրիշ անկարգութիւնով կրնայ պատասպարիլ, եթէ ուզուի: Ասանկ օրէնք մը կայ՝ որ ամեն կրօնաւոր մէկ վանքի մը եղբայրութեան անդամ ըլլայ. աւոր համար եպիսկոպոս մը եթէ կրօնաւոր մը եկեղեցական ձեռնադրէ, ուզած վանքին եղբայր կանուանէ իւր ձեռնադրածը: Արմաշու վանքը այս կերպ շատ մը եղբայրներ ունի, որոնց ոչ երեսը տեսած է, և ոչ ի՞նչ ըլլալը գիտէ, եղբայրներ՝ որ վանքին դուռը օր կողմէն բացուին անգամ չեն գիտեր: Ենք այս շինծու եղբայրները ի՞նչ օրէնքով եղբայր պիտի ձանձնամք, չեմք գիտեր: Աւետարանի պատանիները չնայ ասոնք՝ որ վանական ընկերութեան եղբայր ըլլալ կուզեն առանց անոր ամեն պայմանները գիտնալու, Եկեղեցւոյ ուխտաւորութեան ժառանգաւոր ըլլալ՝ առանց աշխարհական կապակցութեանց թելը ձեռքը ձգելու. մէկ խօսքով, անձնութեան պատրուակաւ անձնասիրութեան ամենէն յաջողակ ծառայան ձեռք առնել չէ՞ տիրիկա. տեղը չէ՞ ուրեմն ըսելու՝ թէ ասեղին ծակէն հաստ պարան մը անցնի նէ՞ ասոնք ալ այդ խելքով կրօնաւոր կրնան ըլլալ:

(Շարունակելի տես Թիւ Ա երես 9)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՄԱՇԻՆՈՅ
ՎԱՆԱՅՆ

Ի Շ Ի Ր Ա Կ :

(Շարունակելի տես Թիւ Ա երես 9)

Տեղագրութիւն Էդիսթանի Եկեղեցւոյ վանայ, որ ի հարաւայն եղբ. գաւառին Շիրակայ:

Հոգեմանք անուանեալ հոյակապ եկեղեցի՝ է մերձ ՚ի Սօկրմլու գեղջ յարեմոնեան հովիտս ստորոտին Արագածու լեռին ՚ի ձորամէջ մայրի ՚ի գաւառին Շիրակայ. կառուցեալ փառահեղ կաթուղիկէիւ կոթածոյ ցարդ ամրոյջ ՚ի վերայ առուին, որ զայ ՚ի գեղջէն, և խոտորեալ ՚ի Տիւրքիս, գնայ կանէ ՚ի Բողալքեասան կոչեցեալ գիւղ ՚ի նոյն գաւառի. և է հետի ՚ի Սօկրմլուայ՝ գրեթէ մի ժամ հեռաւորութեամբ, ՚ի լանջս արեւմտեան գոտնայ մեծի լեռինն, զերևս յարեւըս ունելով:

Եկեղեցին Հոգեմանք կոչեցեալ յարձանագիրս իւր՝ է անխն՝ հաստատեալ կաթուղիկէն ՚ի վերայ կամարաց չորից որմնասեանց. որք են երեք լորակք միակցուողք ձեւացեալ յորմն ՚ի վերմինչէ ՚ի չորեան անկիւնաւոր վերնասարիսին ՚ի ներքոյ կամարացն, յորոյ վերայ և կամար մի բոլորակ կողմնակի անկեալ. ունի ՚ի վերայ՝ զգմբէթն չորիւք լուսամտօք:

Արտաքին երեւոյթ գմբէթին է միանման անգարդ բոլորակ՝ կարմիր քարամիք. բայց յեզերս գմբէթայրկին՝ քանդակագործ սեւերանդ գործեալ. իսկ յարկ նորա՝ խորշ խորշ քարամիք բարձրացուցեալ մինչև ցլուխն. ուր փոքր մի առ հնութեանն երեքն հետք աւերանաց և առանց խաչի, այլ ՚ի ներքուստ կարի ամրոյջ:

Ունի տաճարն զմի սեղան հանդերձ խորհրդանոցիւ, և զերկուս խորանս յաջմէ և յահիկէ նորա. չորս այլ ևս ՚ի չորից կուսէ եկեղեցւոյն են լուսամտօք ՚ի ներքուստ լայն ձեւացեալք, և արտա-